ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 22 մարտի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Թունյանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Ա. Պետրոսյանի

Քննության առնելով Պավել Մանուկյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Պավել Մանուկյանը (ներկայացուցիչներ՝ Տիգրան Եգորյան, Դավիթ Գյուրջյան) դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը սկզբնական ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2016 թվականի մարտի 1-ին, որից հետո մատնանշված

թերությունները շտկելուց հետո դիմումը կրկին ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2016 թվականի մարտի 9-ին)՝ խնդրելով.

«ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավել ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մասը՝ այնքանով, որքանով նախատեսում է անձի նկատմամբ կալանավորման տեսքով խափանման միջոցի կիրառումը դռնփակ դատական նիստում, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի «Դատական ստուգումը կատարվում է դռնփակ դատական նիստում՝ դատախազի և պաշտպանի մասնակցությամբ» դրույթը դրան տրված այն բովանդակության, մեկնաբանության մասով՝ որով իր իսկ կալանավորման հարցով նշանակված դատական նիստը վերաքննիչ դատարանում կարող է կայացվել մեղադրյալի բացակայությամբ»:

2. Ըստ դիմողի՝ վիճարկվող իրավական դրույթները սահմանափակում են համապատասխան գործերի քննության հրապարակայնությունը՝ առանց սահմանելու համապատասխան դատական ատյանի համար պարտականություն՝ յուրաքանչյուր դեպքում պարզել դռնփակ դատական նիստ հրավիրելու իրավաչափ նպատակն ու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի հստակ պահանջները:

Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իմպերատիվ պահանջը՝ կապված անձի կալանավորմանն առնչվող լսումները դռնփակ դատական նիստում անցկացնելու հետ, չի բխում ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերից և ուղղակիորեն հակասում է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, քանի որ չի անդրադառնում ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված նպատակներին ու պայմաններին:

Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Դատական ստուգումը կատարվում է դռնփակ դատական նիստում՝ դատախազի և պաշտպանի մասնակցությամբ» իրավադրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, քանի որ չի անդրադառնում յուրաքանչյուր դեպքում ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված նպատակների, պայմանների առկայությանը, այլ, անկախ դրանցից, սահմանում է դռնփակ դատական նիստեր հրավիրելու կարգ: Բացի դրանից, դատական ստուգումը մեղադրյալի բացակայությամբ անցկացնելը չի կարող հետապնդել որևէ իրավաչափ նպատակ և զրկում է վերջինիս ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված անձամբ պաշտպանվելու իրավունքից:

3. Պավել Մանուկյանի անհատական դիմումի և դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առկա չեն դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

4. Դիմողը միջնորդություն է ներկայացրել պետական տուրքի վճարումից իրեն ազատելու մասին՝ վկայակոչելով իր գույքային դրությունը (չաշխատելու և գույքային ծանր դրության հանգամանքը):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Պավել Մանուկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մասի, 288-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Բավարարել դիմողի՝ պետական տուրքի վճարումից իրեն ազատելու վերաբերյալ միջնորդությունը:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

22 մարտի 2016 թվականի
ՍԴԴԿՈ/1-10